

9910

# ՔՈԻԵՅՔԸՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՑ ՔԱԶԱՆԱՅԻ ԿՐՈՆՔ



William E. Wilson

ՈՒԽԼԵՐՄ Է. ՈՒԽԼԱԾՆ




ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

4. ՊՈԼԻՍ

286

Վ-57



286

57

NOV 2000

# ՔՈԻՔՅԱՎԵՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՆՑ ՔԱԶԱՆԱՅԻ ԿՐՈՆՔ



William E. Wilson

ՈՒԽԼԵԲՄ Է. ՈՒԽԼՍԸՆ



ՏՊԱՐԱՆ «ԱՆԱՄԻԹ»  
Կ. ՊՈԼԻՍ  
1929

12.08.2013

791

## ՔՈՒԷՅՔԸՐՈՒԹԻՒՆ

Առանց ժամանայի կրօնք

Կրօնք կ'ըլլա՞յ առանց քահանայի, եւ ա արարողութեան։ Առանց դաւանանքի քւատոնէութիւն կրնա՞յ ըլլալ։ Քուէյքըրութեան պատմութիւնը կը ցուցնէ թէ կարելի է գրական պատասխան տալ այս երկու հարցումներուն ալ։ Բարեկամներու Ընկերակցութիւնը, որոնք առ հասարակ Քուէյքըր կը կոչուին, գրեթէ երեք հարիւր տարուան գոյութիւն ունի առանց դաւանական ոեւէ բանաձեւի, առանց քահանայի և առանց ոեւէ արարողութեան։ Եւ սակայն միշտ Քրիստոնեայ եղած է և իր հոգեւորութեան իրականութիւնն ապացուցած է իր գործերով, իր անդամներուն բարձր բարոյականով և ընկերներու բարօրութեան համար իր ջանքով ու եռանդով։

### ՃԱՐԻ ՁԽԻ

Բարեկամներու Ընկերակցութեան հիմադիրն է ձորձ Ֆոքս, երիտասարդ մը որ, երբ գեռ հազիւ քան տարեկան էր, հոգեւոր մեծ լոյս մը ստանալով սկսաւ



63247-67

1647ին քարողել Անդղիոյ ներքին գաւառներուն մէջ։ Սերած էր մաքրակրօն հակումներու տէր բարեպաշտ ընտանիքէ մը և մեծցած՝ քաղաքական ու կրօնական խոռվութեան այն օրերուն, որոնք Անդղիոյ Քաղաքային Պատերազմին, հասարակավետութեան հաստատման և Քրոնուէլի տիրապետութեան յանդեցան։ Այդ օրերուն Անդղիոյ մէջ խօսակցութեան սիրական նիւթը կրօնն էր։ Շատեր կրօնական հաւատքի մեծ մեծ ցոյցեր կ'ընէին։ Բայց Ճորճ Ֆոքս, որ տղայ հասակէն անկեղծ ու եռանդուն էր բացառիկ կերպով, իր բարեկամներուն ու ծանօթներուն մէջ ի զուր փնտոեց մէկը որու մէջ իրական գորութիւն ըլլար կրօնը։ Բառեր, գաղափարներ և մեծ վիճաբանութիւններ գտաւ զանազան վարդապետութիւններու մասին, սակայն չգտաւ կեանքի և և նկարագրի վրայ գործող այն ազդեցութիւնը որ, վստա՞օրէն գիտէր ինք, կրօնի պտուղը պիտի ըլլար։ Ասդին անդին զարձաւ օգնութիւն փնտոելու համար քարողիչներէ և Քրիստոնէական հաւատքի մեծ մեծ ցոյցեր ընողներէ, բայց ոչինչ գտաւ իր պէտքը լեցնող։ Ապա յանկարծ, երբ առանձին էր, ձայն մը լոեց որ կ'ըսէր, «Մէկը կայ, Քրիստոս Յիսուս, որ կարող է քուպէտք լիցնել, քեզ գոհացնել։» Այն ատեն հասկցաւ թէ, ոչ միայն գտանալու է ինք Աւետարաններուն ուր Յիսուսի վարդապետութիւնը կը պարզուի, այլ եւ իր իսկ սրտին ուր նոյն ձայնը կը խօսի և կ'առաջնորդէ իրեն ամէն դժուարութիւններու և վարանումներու ժամանակ։ Խոկոյն ամբողջովին անձնատուր եղաւ ներքին այս ձայնին, կամ ինչպէս յաճախ կը կոչէր զայն, Ներ-

քին այս Լոյսին, առաջնորդութեան։ Եւ արդիւնքն եղաւ կեանքի այնպիսի նորոգում, անձի և բնաւորութեան այնպիսի ամբողջական մաքրագործում և Աստուածային Զօրութեան այնպիսի ճաշակում ու յաղեցում, որ ըստ ինք թէ ԱՍտուծոյ զրախտն հասայ բոցեղէն սուրին միջոցով, և բովանդակ Ցնորթիւնը տարբեր բոյր մը ունի։» Ասով, հարկաւ, ուզեց ըսել թէ վերստացաւ կարծես հախնի այն անմեղութիւնը, զոր իրենց անկումէն առաջ մեր նախածնողներն ունէին եղեմի դրախտին մէջ։

### Քրիստոս մեր մէջ

Այս գաղափարը թէ Քրիստոս լոկ անցեալ դէմք մը և մեր հաւատքին պատմական մեծ հիմնադիրը չէ, այլ այսօր իսկ կենդանի անձ մը, կեանքի կառավարու Առաջնորդ, Ֆոքսի առանձնայատուկ պատգամն եղաւ։ Ինք զգաց թէ ուղղագաւանութեան վրայ պնդումը, զանազան հատուածներու դաւանական վէճերը և անոնց հետեւանքով ծագած թշնամութիւնները, եկեղեցային վարչութեան դրութիւններու և ինչ ինչ արարողութիւններու և ծէսերու վրայ ծանրանալը երբեք չին համապատասխաներ կրօնի բուն էութեան։ Եւ հետեւաբար բոլորովին երկրորդական կարեւորութիւն ընծայեց կրօնի և վարդապետութեան վերաբերեալ ծանօթութիւններու, զաղափարներու, խորհուրդներու։ Նոյնպէս ըրաւ նաեւ Բարեկամներու Ընկերակցութիւնը, անոր օրինակին հետեւելով։ Իր սիրական խօսքերէն

մին էր թէ Քրիստոս եկաւ մարդիկն իրենց տեսութիւններէն բաժնել, որպէս զի իրենց ներսիդին ճանչնան իր ձայնը : Ասով տարակոյս չկայ թէ Ֆոքս Նոր կտակարանի Քրիստոնէութենէն բան մը վերստացաւ : Անձամբ փորձառու եղաւ անոր զոր Պօլոս առաքեալ «նոր ստեղծում» և «Քրիստոս իմ մէջս» կ'անուանէ : Զգաց ներքին այն միութիւնը Քրիստոսի հետ, որու վրայ կը խօսուի Յովհաննու աւետարանին մէջ որթին ու ճիւղերուն նմանութեան տակ : Կ'ըսէր թէ ինք կոչուած է մարդիկ բերել Քրիստոսի և հոն թողուլ զանոնք : Այս էր և է ուրեմն Բարեկամներու Ընկերակցութեան բնորոշիչ յատկանիշը : Զեն ուղեր անոնք ուրիշի մը կրօնական կեանքին իշխել, ուրիշներու ուսուցիչ ըլլալ շարունակ : Այլ մանաւանդ կ'ուղին ուրիշներու մէջ վառել, արծարծել ինչ որ իրենք անձամբ զգացած են, հաւատարով թէ այդ փորձառութիւնն ինքնին Աստուծոյ հետ հաղորդութիւն է և հետեւապէս կրնայ արտաքին օդնութենէ անկախ ըլլալ :

### Ներքին Լոյս

Այս կը բերէ մեզ այն կէտին, որ Քուէյքըրները ուրիշ Քրիստոնեաներէ վճռապէս կը զանազանէր այն ժամանակ, թէպէտ հիմա Եկեղեցւոյ ամէն ճիւղերու մէջ կ'ընդունուի լուսաւորեալ բազում Քրիստոնեաներէ, այսինքն սա համոզման թէ ամէն անձի մէջ Աստուծածային կայծ մը կայ, ներքին լոյս մը Աստուծմէ, Աստուծածային կեանքի հպում մը, ներքին կեանքի մէջ

էապէս Աստուծածային բան մը, որ կարող է ամբողջ կեանքի առաջնորդն ու վարիչ ոյժն ըլլալ : Այս ընդհանրապէս կը կոչուի «Ներքին Լոյս», բայց ուրիշ անուններ ալ ունի, ինչպէս «Աստուծոյ Զայնը», «Քրիստոսի Լոյսը», «Սերմը», «Վերջինը մանաւանդ նշանաւոր է իր սա թելագրութեան պատճառով թէ յարմար պարագաներու տակ կրնայ աճիլ ու ըլլալ առաջին ակնարկով երեցածէն աւելի մեծ բան մը : «Բարեկամմաները կը հաւատային թէ մարդուս ներսը գտնուող Աստուծային այս բանը բարին ցոյց կու տայ, Աստուծոյ և կեանքի ու նկարագրի ճշմարիտ զարգացման կը տանիի : Սակայն շատ մարդիկ չճանչցան զայն և արտաքին բաներով այնքան զրաւուած էին որ բնաւ ուշագրութիւն չըրին անոր : Այսպէս անոնց պատգամն եղաւ ոչ թէ մարդոց տանիլ բան մը զոր արդէն չունէին, այլ ցոյց տալ անոնց մէջ արդէն իսկ գտնուած Աստուծային այն բանը, որ աճելով կը զօրանայ, եթէ անոր ուշագրութիւն ընծայուի, և կ'առաջնորդէ մարդոց կեանքին, ու Աստուծոյ հետ կատարեալ հաղորդութիւն վայելի և իրենց նմաններուն համար գործոն ծառայութեան կեանք վարել կու տայ անոնց :

### Արդիւնքը

Ֆոքսի քարոզութիւնը քանի մը ամսուան մէջ բաւական թուով հետեւողներ չահեցաւ Անդղիոյ այլեւայլ կողմերը, վասն զի երկրին մէջ հոս հոն ցրուած բաւական ժողովուրդ կար, որ գժգոհ էին առ հասա-

րակ ներկայացուած Քրիստոնէութենէն և անձկաւ ու աղօթքով կ'սպասէին այնպիսի կեանքի մը որ գոհացում տար իրենց : Ահա «փնտող» կոչուած այդ մարդոցմէ կազմուեցաւ Բարեկամներու Ընկերակցութիւնը : Կրնանք ըսել թէ ձորճ Ֆոքս էր «փնտող» մը որ գտաւ և կրցաւ «փնտող» ուրիշ շատերու ալ օգնելոր գտնեն :

Պէտք չկայ աւելի բան ըսելու Բարեկամներու Ընկերակցութեան պատմութեան վրայ : Կը բաւէ ըսել թէ հալածանքի շրջանէ մը ետեւ ազատութիւն գտաւ վերջապէս և իբր փոքր ու աղդեցիկ մարմին մը մինչեւ այսօր կը գործէ Անզղիոյ և Ամերիկայի մէջ :

### Քուէյքըներու Տեսակետը

Կարեւոր է հասկնալ թէ ի՞նչ է Քուէյքըներու տեսութիւնը կեանքի վրայ, վասն զի այսօր հաւանորէն աւելի շատեր կան զայն գնահատող և թերեւս իսկ անօր յարող քան բուն ժիշտ զարուն մէջ :

Քուէյքըներ չէին ուզեր, եւ չեն ուզեր, ուզդափառ Քրիստոնէութեան դաւանանքին տարբեր դաւանանք մը հաստատել: Երբ իրենց դաւանանքն յայտնեցին վարդապետութեան ձեւով, տեսնուեցաւ թէ ուզդափառ եկեղեցոյ դաւանանքին հետ նոյն է: Անոնց և ուրիշ Քրիստոնեայ ժողովուրդներու միջեւ տարբերութիւնը սա է միայն որ անոնք փորձառութեան հետ բազդատմամբ՝ դաւանանքի բոլորովին երկրորդական կարեւորութիւն կու տան: Անոնց ըմբռնումով, Քրիս-

տոնէին սահմանը կամ բացատրութիւնը Յիսուս Քրիստոսի, Աստուծոյ և Եկեղեցոյ վրայ այս և այն համոզումն ունեցող մը չէ, այլ մէկը՝ որու կեանքը Քրիստոսի Հոգիէն կ'առաջնորդուի և որու վարքը Անոր ներքին գորութենէն կը ձեւակերպուի: Անոնց կրօնը փորձառութեան կրօն է, իսկ զայն բացատրող բանաձեւն իրենց համար փոքր կարեւորութիւն ունի:

Քուէյքըներու տեսութեամբ, փորձառական այս կրօնն ունենալու է էական երեք բան.

(ա) Աստուծոյ Հոգիէն, կամ ներսը բնակող Քրիստոսէ, առաջնորդուող և կառավարուող կեանք մը:

(բ) Նոյն փորձառութիւնն ունեցող ամէն ուրիշներու հետ յարածուն միութիւն:

(գ) Քրիստոնէական առաքինութիւններ ու չնորհքներ ի տես բերող և բոլոր մարդոց հասարակաց օգտին նուիրուող կեանք մը:

Քուէյքըներ բնաւ չպաշտպանեցին սա զաղափարը թէ կրօնը սոսկ յափշտակութեան պահերուկամ վիճակներու մէջ կը կայանայ: Միշտ շեշտեցին սա իրողութիւնը թէ պէտք է որ հոգեւոր յառաջդիմութեան ու բարոյական կատարելազորձման արդիւնքներ տայ:

### Առաջնորդութիւն

Ներքին լոյսը գտնող անձին էական հանդամանքը Աստուծային Առաջնորդութեան փորձառութիւնն է: Անհատն այլ եւս բոլոր իր ուժով կամ ուրիշներու օգնութեամբ չաշխատիր գտնել թէ ի՞նչ ընելու է լոկ իր

անձին համար : Աստուծոյ ներքին լոյսին կ'ապաւինի , և առաջնորդութեան համար անոր կը դառնայ կրկին ու կրկին : Կ'զգայ թէ իր կեանքը Աստուծոյ ձեռքն է , բայց ոչ սա իմաստով թէ Աստուած է արտաքին զօրութիւն մը որ իր կամքին համեմատ կը գործածէ զի՞նք , այլ թէ ներքուստ կը յայտնէ այդ կամքը : Հետեւանքը կ'ըլլայ կեանքի վրայ վստահիլ և ազատ ասպարէց տալ զօրութեան մեծ աղբիւրին : Աստուածային առաջնորդութեան ապաւինողը հոգէ կ'աղատի , աւանդութեան գերի ըլլալէ կ'աղատի : Կրնայ աշխարհի նայիլ և իրմէ պահանջուածն հասկնալ՝ վստահ ըլլալով թէ Աստուծոյ շնորհքով ու զօրութեամբ կարող է զայն ընել , ի՞նչ ալ ըլլայ : Ահա ասոր համար Քուէյքըրներն յաճախ առաջինները կ'ըլլան եկեղեցւոյ առջև ելլող խնդիրները տեսնող և անսովոր գործերու ձեռնարկող :

### բ) ՄԷԿ Մարմին և ՄԷԿ Հոգի

Շատ անզամ կը կարծուի թէ , եթէ մարդիկ իրենց անձնական առաջնորդութեան ապաւինին և ոչ թէ եկեղեցւոյ զրութենական ուղղութեան , մեծ ալիքտի կ'ենթարկուին բնականաբար : Քուէյքըրներու փորձառութիւնն այդպէս չեղաւ : Անոնք գտան թէ Աստուած շփոթութեան Աստուած չէ , այլ խաղաղութեան Աստուած : Եւ այս բնական է , վասն զի եթէ արգարեւ ներսը խօսող ձայնը Աստուծոյ ձայնն է և եթէ այդ ձայնին մտիկ ընելու և հնագանդելու իրական նպատակ կայ , արդիւնքն անշուշտ միութիւն կ'ըլլայ : Աստուծոյ Հոգիին

աւելի վստահելով միութիւն ձեռք բերելու այս ձիգը շատ ազդած է ընկերութեան դորձերը վարելու թուէյքըրեան զրութեան վրայ : Անոնք քուէ չեն առներ , այլ կը ջանան հասկնալ թէ իրենց մէջ զործող Աստուծոյ Հոգին ի՞նչ որոշում ցոյց կու տայ : Համարձակ կը յայտնեն իրենց տեսութիւնները , կը ջանան հասկնալ ուրիշներու տեսութիւնները և կ'աշխատին հակառակութեան կամ մրցման ամէն ողի արտաքսել՝ հաւատալով թէ Աստուած զիրենք միաբանական որոշման մը պիտի առաջնորդէ , ոչ թէ իրաւախոհութեան , այլ այնպիսի բանի մը՝ որ իրավէս պիտի յայտնէ անոր կամքը բավանդակ ժողովրդին համար : Եւ անոնց այս ակնկալութիւնը միշտ կը պսակուի զարմանալի կերպով :

Ի՞նչ որ սորված են միութեան վրայ հաւատքի ոչ թէ արտաքին արտայայտութեամբ կամ կազմակերպութեան միաձեւութեամբ՝ իրենց խորհիլ կու տայ թէ Քրիստոնէական միութեան և Քրիստոնեայ աշխարհի վէճերուն բարձման միջոցն է ոչ թէ միօրինակ դաւանանք կամ եկեղեցական միաձեւ կազմակերպութիւն ունենալ , այլ հասարակաց փորձառութեան հիմին դասնալ՝ անհատապէս ու հաւաքապէս Աստուածային առաջնորդութիւն փնտուելով :

### զ) Հոգիին Պետութեար

Անհատներու կեանքին և Բարեկամներու Ընկերակցութեան կեանքին մէջ առ հասարակ Աստուծոյ Հոգիին հպատակելու գործնական արդիւնքն եղաւ անհատական

Նկարագրի բարգաւաճում և ընկներային լաւագոյն կարգի մը համար աշխատելու յօժարութիւն։ Զափաղանցութիւն չէ ըսկէ թէ տասնըհօթներորդ ու տասնըութերորդ դարերուն Անդղիոյ մէջ առեւտրական բարձր բարոյական մը զարգացաւ զլիսաւորապէս Քուէյքըրներու աշխատութեամբ գործի և ճարտարական ասպարէցներու մէջ։ Ճշմարտախօսութիւն, պատիւ, հաւատարմութիւն և ընդհանուր բարոյական անկեղծութիւն ամբողջ ժողովրդին յատկանիչն էին։ Անոնք տեսաննաեւ թէ ո՛ւր ընկերութիւնը և երբեմն Քրիստոնէական Եկեղեցին թերացած էին՝ մեծ զեղծումներ չջնջելով կամ չպախարակելով։ Զոր օրինակ, նախ Քուէյքըրներն զգացին թէ զերութիւնը բոլորովին անհամաձայն է Քրիստոնէութեան, և նախ անոնք աշխատեցան անոր վերջ տալ Ամերիկայի մէջ։ Ամերիկայի Բարեկամներու Ընկերակցութիւնը, այն երկրին մէջ զերեվարութեան չնշումէն գրեթէ հարիւր տարի առաջ, բնաւ չէր մասնակցեր գերիներու տուրեապին։

Ընկերակցութեան գրեթէ առաջին օրէն սկսեալ Քուէյքըրները խաղաղասէր էին, պատերազմը Քրիստոսի ուրացում համարելով և հաշտութիւն ու խաղաղութիւն քարոզելով ու զործագրելով։ Պատերազմի գրութիւնը բացորոշապէս մերժող Ամերիկան միակ նահանգին կառավարութեան հիմնադիր Ուիլեմ Փէն ալ Քուէյքըրէր էր։ Անոր գաղութն ի Փէնսուլիքնիա Կօթանասուն տարի կատարելապէս խաղաղ յարաբերութիւն պահեց բնիկ Հնդիկներուն հետ, մինչ Ամերիկան ուրիշ գրեթէ ամէն գաղութ վտանգի մէջ էր շարունակ անոնց երեսէն։

Նաև լաւ ծանօթ է Քուէյքըրներու աշխատութիւնը պատերազմի վէրքերը բուժելու, տառապողներու դարման և օգնութիւն հասցնելու և Քրիստոսի «Սիրեցէք ձեր թշնամիները» պատուիրանը գործադրել ջանալու։ Անոնք միշտ առաջիններէն են հանրօգուտ գործի մը ձեռնարկող, երբ դեռ սիրելի չէ այն, և այս ամէնը միայն և միայն սա պատճառով որ իրենք Աստուծոյ Հոգիէն առաջնորդուելու փորձառութիւնն ունին։

#### Քրիստոնէութիւնն իրեւ Կեանի

Անոնց համար կրօն ու կեանք մէկ են։ Ամբողջ կեանքը սուրբ է, ոչինչ պիղծ է կամ աշխարհային։ Ինչ որ բարի, ուղիղ և օգտակար է իրենց ընկերներուն՝ այն է գործը որու հրաւիրած է Աստուծած զիրենք։ Ինչ որ վասակար է, վատնում է և իրենց ընկերներուն կը վնասէ, ծուռ է և տեղ չունի (և ունենալու չէ) Քրիստոնէին կեանքին մէջ։ Հետեւաբար ամբողջ կեանքը սուրբ կը համարին և կեանքի ամէն պարագաներ ու վիճակներ Աստուծածային չնորհաց միջոց կը նկատեն։ Ասոր համար, և սովորական կեանքի մէջ Քրիստոսի ներկայութիւնն ու զօրութիւնը զգալնուն համար, սրբազն ուէ խորհուրդ աւելորդ կը թուի իրենց։ Կ'զգան թէ սուրբ խորհուրդները Քրիստոսի բուն ոգիին հակառակ են, և իրենց նոր կտակարանի սիսալ մեկնութիւն կը թուի սա ընդհանուր զաղափարը թէ գոնէ երկու սրբազն խորհուրդ հարկ է գրկութեան համար։ Ամբողջ կեանքը Աստուծոյ կը պատկանի, ամբողջ կեան-

Քը անոր պէտք է նուիրուի : Եթէ ինչ ինչ արարողութիւններու կատարումը մարդոց իրօք կ'օգնէ իրենց ամբողջ կեանքը անոր նուիրել, իրենք չեն առարսին : Սակայն իրենց անպէտ կը թուին անոնք : Իրենք ճշմարիտ զօրութիւնը ամէն օր Աստուծոյ առաջնորդութեան ապահնելու մէջ կը գտնեն :

### Երկրպագութիւն

Հետեւաբար շատ պարզ է անոնց պաշտամունքը : Ճշտիւ խօսելով, Աստուծոյ ծառային համար ամբողջ կեանքը պաշտամունք ըլլալու է : Սակայն մասնաւոր ժամանակներ կան երբ կ'ուզենք միաբանութեամբ փնտուի Աստուծոյ ներկայութիւնը : Որովհետեւ Աստուծներուն կը խօսի ամէն անձի, լոիկ հաւաքուիլ բնական է, և եթէ բնաւ խօսք մը ըստուի ալ, դարձեալ պաշտամունքը տեղի կ'ունենայ և անհատներն իրարու և իրենց Աստուծոյն հետ կը միանան : Բայց բնական ալ է որ լուութիւնը խղեն անոնք որ կ'զգան թէ իրենց մէջ զործող Աստուծոյ Հոգին կը մղէ զիրենք իրենց ընկերներուն հաղորդել բանմը զոր Հոգին սորվեցուց իրենց : Ուստի, թէեւ Քուէյքը ներու ժողովը լուութեամբ կը սկսի և կրնայ ուէ ժամանակ կատարեալ լուութեան մէջ թաղուիլ, ուէ յորդոր, զովարանութիւն և աղօթք կատարելապէս ներելի և ընդունելի են, պայմանով որ մատուցանողն զգայ թէ խօսքերը տուողն Հոգին է :

### Մարդկութեան Միութիւնը

Այս է, համառօտիւ, Բարեկամներու Ընկերակցութեան կրօնական դիրքը : Ընկերակցութիւնը չանար նոր անդամներ շահիլ, մանաւանդ այս ու այն բաժնել այն եկեղեցին որու կը պատկանին : Այլ կը հաւատայ թէ պատգամ մը տրուած է իրեն, որ թերեւս աւելի կարեւոր արժէք ունի այսօր աշխարհի համար : Այդ պատգամը սա է թէ կրօնը կրօնաւորներու, սրբազն խորհուրդներու և հաւատոյ գաւանութիւններու առաջին և աւագ հարցը չէ, այլ նախ ներքուստ զգալ Աստուծոյ ներկայութիւնը և երկրորդ՝ բոլոր զօրութեամբ աշխատիլ ի զործ դնել ինչ որ այն ներքին Առաջնորդը կը պատուիրէ : Բարեկամներու Ընկերակցութիւնն համազուած է թէ մարդկութեան այս միութիւնը կրնայ տեղի ունենալ միայն այս ներքին փորձառութեամբ ու այս նուիրմամբ : Անոնք կը հաւատան թէ, եթէ մարդիկ ամէն կողմ իրենց հաւատքն արտայայտող արտաքին ուէ բանաձեւի չնային, այլ ջանան փորձն առնել Քրիստոսի հետ ներքին հպման և յետոյ զայն արտայայտեն ընկերներու հանդէպ սիրով, շուտով կ'իրագործուի մարդկութեան միութիւնը և երկրի վրայ սիրոյ թաղաւորութիւնը, և զաւանական ու յարանուանական տարբերութիւններ այլեւս անարժէք կ'ըլլան ու բնաւ չեն զպչիր իրական կեանքին որ է Քրիստոս մեր մէջ :



ՀՀ Ազգային գրադարան



NL0180214

Հետեւեալ գիրմերը կը ծախուին  
Պայպը Հառսի մէջ

	Դահնեկան
Թիփ Լեվիս	25
Յիսուս Քրիստոսի Վարք	25
Շնունդի Երգ	25
Տիսու	30
Փողիաննաւ	30
Առերք Պատերազմ	50
Միայն Դաւիթ	50
Բառարան Ար, Գրոց	100
Քրիստոնուի Ճամբորդորին	100